

Պատասխաններ

Աշխարհագրություն առարկայի օլիմպիադայի հանրապետական փուլի – 2022-2023 ուս. տարի

9 – րդ դասարան

1. ա-սխալ; բ-սխալ; գ-սխալ; դ-սխալ (յուրաքանչյուրը՝ 0.25 միավոր)

2. ա-սխալ; բ-սխալ; գ-ճիշտ; դ-ճիշտ (յուրաքանչյուրը՝ 0.25 միավոր)

3. **ա.** Արհեստական ռոբոտ (0.5 միավոր): Եթե փոխարենը նշվում է այլ բնույթի պատասխան, ինչպիսին է «հողաբարելավման տեսակ է» - 0 միավոր

բ. Բնակչության թվի կրճատումը որոշակի տարածքում (0.5 միավոր): Եթե աշակերտը նշում է միայն մասնավոր դեպք, ինչպիսին է բնակչության թվի կրճատումը ծնելիության և մահացության ցուցանիշների բացասական հարաբերության դեպքում՝ շնորհել 0.25 միավոր)

4. Լյուքսեմբուրգ

5. **ա** սելվա (սելվա), ընդունել նաև հիլեյ տարբերակը **բ.** լյանոս

6. **ա.** 1) $120 \times 10 = 1200$ մ (զագաթների միջև բարձրությունների տարբերությունը)

2) 1800 մ + 1200 մ = 3000 մ

Եթե աշակերտը հաշվարկը կատարել է 12 մ – 1 մմ ս.ս. չափանիշով, ևս ընդունել որպես ճիշտ լուծում: Եթե գործողություններում առկա է միայն հաշվարկային սխալ, սակայն բաղադրիչները ճիշտ են՝ **նշանակել 0.75 միավոր:** Եթե պատասխանը ևս ճիշտ է ստացել՝ **1 միավոր:**

բ. 1) Գետի ծախսը՝ $Q = 2$ մ \times 20 մ \times 0.5 մ/վ = 20 մ³/վրկ (0.25 միավոր)

2) 20 մ³/վրկ \times 50% : 100% = 10 մ³/վրկ (ևս 0.25 միավոր)

3) 50 մ³ : 10 մ³/վրկ = 5 մ³ վրկ (լցվելու ժամանակը)

Եթե աշակերտը ուշադիր չի կարդացել պահանջը և վայրկյանի փոխարեն հաշվարկել է ժամանակի չափման այլ միավորով, սակայն այլ սխալ չունի՝ նշանակել 0.75 միավոր: Եթե գործողություններում առկա է միայն հաշվարկային սխալ, սակայն բաղադրիչները ճիշտ են՝ ևս **նշանակել 0.75 միավոր:** Եթե ամբողջը լիարժեք ճիշտ է ստացել՝ **1 միավոր:**

7. **ա.** Հետևյալ 6 դաշտերից ցանկացած 4-ը ընդունել որպես ճիշտ պատասխան՝ Կարևո, Աշկալայի, Դերջանի, Երզնկայի, Կամախի, Խարբերդի (յուր. 0.25 միավոր)

բ. Ասիա աշխարհամասի հարավը, հարավ-արևելքը և արևելքը (եթե նույնիսկ աշակերտը նշում է միայն մեկ արեալը, շնորհել 0.25 միավոր, սակայն եթե նշում է դրանցից յուրաքանչյուրը որպես առանձին արեալ, տալ առավելագույնը 0.25 միավոր); Արևմտյան Եվրոպան, ԱՄՆ հյուսիս-արևելքը; Գվինեական ծոցին հարող գոտին: (յուր. 0.25 միավոր)

Եթե աշակերտը նշել է չորսից ավելի պատասխան, ցանկացած սխալ պատասխանի դեպքում ընդհանուր միավորը նվազեցնել 0.25 միավորով:

8. **ա.** Գոգի, Ուրծ, Արտենի, Լավար

բ. Նովոսիբիրսկ, Մինսկ, Գլազգո, Մուսբալ

Երկու դեպքում էլ իր դիրքում ճիշտ նշված պատասխանի համար աշակերտին շնորհել 0.25 միավոր

9. **ա.** Որպես հիմնական պատճառ անհրաժեշտ է նշել օվկիանոսային հոսանքների ազդեցությունը բնակլիմայական պայմանների վրա: Լաբրադոր թերակղզու ափերի մոտով անցնում է Լաբրադորյան սառը հոսանքը, իսկ Սկանդինավյան թերակղզին Հյուսիսատլանտյան տաք հոսանքի (աշակերտը կարող է նշել նաև Նորվեգական ճյուղի) ազդեցության գոտում է, ինչի արդյունքում կլիման ավելի մեղմ է և խոնավ: Այլ երկրորդական պատճառի ներկայացման կամ բացատրության թերությունների դեպքում՝ առավելագույնը 0.5 միավոր

բ. Խոշոր քաղաքներում մեծ քանակի սննդային թափոն է կուտակվում, որը և օգտագործում են խոզաբուծության մեջ որպես անասնակեր, քանի որ խոզերը կերի նկատմամբ պակաս ընտրողական են: Այլ՝ երկրորդական պատճառի ներկայացման կամ բացատրության թերությունների դեպքում՝ առավելագույնը 0.5 միավոր:

10. **ա.** Բելառուսում կյանքի միջին տևողությունը մի փոքր կրճատվում է նշված ժամանակահատվածում, իսկ Մոլդովայում անկումը ավելի մեծ է՝ գրեթե երկու տարով: Միննույն ժամանակ Չեխիայում դիտվում է կյանքի միջին տևողության ավելի մեծ աճ՝ քան Լեհաստանում (0.5 միավոր): Հետևաբար, համաձայն հիմնական օրինաչափության, առաջին խմբում կարելի է միավորել Բելառուսն ու Մոլդովան, իսկ մյուս խմբում՝ Լեհաստանն ու Չեխիան (0.5 միավոր)

բ. Նկատվող տարբերությունների գլխավոր պատճառը ԽՍՀՄ փլուզման և սոցիալիստական ճամբարի վերացման արդյունքում երկրներում դիտված տնտեսական ճգնաժամն ու դրան հաջորդած տնտեսական և քաղաքական ինտեգրացիայի ուղիների տարբերությունն է: Լեհաստանն ու Չեխիան

կողմնորոշվեցին դեպի Եվրոպական տնտեսական տարածք և հարեցին Հյուսիսատլանտյան դաշինքին, ինչի արդյունքում ունեցան տնտեսական զգալի առաջընթաց, իսկ Մոլդովան ու Բելառուսը շարունակեցին մնալ Ռուսաստանի ազդեցության գոտում և տնտեսական ճգնաժամի հաղթահարումը տևեց ավելի երկար **(0.5միավոր)**:

գ. Գլխավոր պատճառը երկրորդ աշխարհամարտում նշված երկրների կրած կորուստների տարբերությունն է: Դանիան՝ չնայած օկուպացվեց Գերմանիայի կողմից, սակայն անհամեմատ ավելի քիչ կորուստներ ունեցավ և սակավ դիմադրություն ցույց տվեց: Լեհաստանը, Բելառուսը և Մոլդովան հայտնվեցին պատերազմի ամենաթեժ գոտում և անհամեմատ ավելի մեծ կորուստներ կրեցին **(0.5 միավոր)**

Իմաստային ճիշտ պատասխանները ընդունել որպես լիարժեք ճիշտ: Թերի պատասխանների դեպքում շնորհել 0.25միավոր

11. ա. Խողովակաշարայինը **(0.5միավոր)**; պատճառը տրանսպորտի այլ տեսակների համեմատ տեղափոխությունների միջին հեռավորության ավելի մեծ լինելն է **(0.5միավոր)**:

բ. Այդ կետերը բևեռներն են **(0.5միավոր)**, քանի որ բոլոր միջօրեականները հատվում են այնտեղ **(0.5միավոր)**:

12. 1-Բ; 2-Ա; 3-Գ; 4-Ե (յուր. 0.5միավոր)